

ԱՂԹԹԸ

Երբ մեր օրինագանցութիւններուն համար կ'աղօթենք կամ կ'աղերսենք Աստուծոյ, մեր մտքերը եւ մտածումները, պահանջներն ու աչքերը այլ տեղեր պետք է դարձնենք կամ պտտցնենք, այլ՝ հեծեծանքով եւ հառաչանքով Տիրոջ բարկութիւնը մեղմենք եւ գուրջ շարժենք, որուն համար ալ ան մեր մեղքերը պիտի քաշէ, մեզ պիտի մաքրէ մեր անօրէնութիւններէն եւ պիտի փրկէ սարսափելի պատիժներու դժբախտութենէն եւ յաւիտեանական ամօթէն, շնորհիւ մեր աղօթքներուն եւ ջերմեանդ սրտին: Աղօթքը աղօթողին ձեռքն է, որով կը բռնէ Աստուծոյ ոտքերէն ու գայն կը թեփէ աղերսողին աղօթքին կողմը: Աստուծոյ կը սիրէ աղօթողին աղաչանքը. «Խնդրեցէ՛ք Աստուծոյն եւ պիտի տայ ձեզի, փնտրեցէ՛ք եւ պիտի գտնէք»: Անոնք, որ մեղքերով ծանրաբեռնուած են, վիշտերով մնշուած, թշնամիներէն տանջուած եւ ցաւերով չարչարուած, պետք է աղօթեն եւ աղերսեն, որովհետեւ անոնք, որ անկեղծ հոգիով եւ անկեղծ հաւատով կ'աղօթեն ու բարին կը խնդրեն Աստուծոյն, իրենց բոլոր խնդրանքները կը կատարուին, ինչպէս կատարուեցաւ մեր առաջին հայրերուն պարագային: Բայց եթէ մէկը ըսէ. «Խնդրեցի եւ աղօթեցի, բայց դարձեալ չստացայ», կը նշանակէ թէ թախանձանքով չէ աղօթած, ինչպէս այրի կիներ անիրաւ դատաւորէն խնդրեց եւ ստացաւ կամ մման այն բարեկամին, որ գիշերով իր դրացիէն քանի մը նկանակ խնդրեց ու ստացաւ, ոչ թէ իր բարեկամութեան, այլ՝ իր թախանձանքին համար:

ՃԱՐԵՐ
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ԽՈՐՀՐԴԱՆՈՑ

Ինչպէս վերեւ յիշեցինք, Ս. Խորանին կեդրոնական բաժինի Հիւսիսային եւ Հարաւային պատերուն վրայ երկու փոքրիկ խոռոչներ կան, որոնք կը կոչուին Խորհրդանոց:

Հիւսիսային Խորհրդանոցին մէջ Ս. Ակիւրը կը դրուի, իսկ Հարաւային Խորհրդանոցին մէջ՝ սրուակով Ս. Միւռնը, եւ այլ անմիջական իրեր, որոնք կը գործածուին Ս. Պատարագի ընթացքին, ինչպէս նշխարի, գինին, որոնք պիտի ընծայուին Ս. Սեղանին, եւ Ս. Խորանի երգեցողութեան համար ժամագիրք մը:

Ս. Պատարագի սկզբնաւորութեան երբ պատարագիչը ի յարկի սրբութեան... կ'ըսէ, վարագոյրը կը փակուի եւ Ս. Սեղանին սպասարկող աւագ սարկաւագը Հիւսիսային Խորհրդանոցէն Ս. Ակիւրը մաղմալով կը բերէ Ս. Սեղան:

Պատարագիչ հոգեւորականը մասնաւոր աղօթքներով կը նուիրագործէ ընծաները՝ նշխարն ու գինին, ապա գեղահիւս դաստառակով կը ծածկէ Ս. Ակիւրը իր ընծաներով:

Սարկաւագը դարձեալ Ս. Ակիւրը կը տանի Հիւսիսային խորհրդանոց, ուր կը մնայ մինչեւ վերաբերումի սրբազան պահը, եւ երբ սրբասացութիւնը կ'երգուի, աւագ սարկաւագը բուրվառակիրին ինկարկութեամբ, կեռոնակիրներու եւ բշոցակիրներու մասնակցութեամբ թափօր կազմած սեղանին ետեւէն դառնալով Ս. Ակիւրը կը բերէ եւ կը յանձնէ պատարագիչ եկեղեցականին: Քրիստոս, որպէս Թագաւոր փառաց կը հանգչի Ս. Սեղանին վրայ մեղսաբաւիչ Ս. Խորհուրդի կատարման համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԺԴ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021 ԹԻԻ 43

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Իմաստ. 14.1-8: Ես. 33.22-34.1 Ա. Կր. 1.18-24: ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 24.27-36

SՕՆ ԳԻՏ ԽԱԶԻՆ ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 24.27-36

Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք: Արծիւները կը հաւաքուին հոն, ուր դիակ կայ: Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի: Երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ահա մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թզենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէ՛ք թէ մարդու Որդին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, իսօքերս պիտի չանհետանան: Սակայն ո՛չ որ գիտէ, թէ երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

ՄԱՂԹԱՔ

Տէ՛ր, խաղաղութեան ճամբաներուն մէջ պահէ մեր քայլերը: Տէ՛ր, ուղղէ եւ առաջնորդէ՛ մեզ եւ բոլոր քեզի հաւատացողները, որպէսզի դէպի խաղաղութիւն եւ յաւիտեանական կեանք երթանք:

ԳԻՒՏ ԽԱՉԻ



Քրիստոնեական տօներուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ Գիւտ Խաչի տօնը: 313 թուին, Միլանոյի հրովարտակով, երբ քրիստոնեաներուն արտօնուեցաւ ազատօրէն պաշտել նոր կրօնը՝ քրիստոնէութիւնը, Երուսաղէմը դարձաւ քրիստոնեաներուն ուխտավայրը: Աշխարհի չորս կողմէն քրիստոնեաներ ուխտի կ'երթային Երուսաղէմ:

327 թուականին, այս ուխտաւորներուն մէջն էր նաեւ Կոստանդիանոս Կայսեր մայրը՝ Հեղինէ թագուհին: Ան կ'ուզէր գտնել Յիսուսի խաչափայտը, որ կորսուած էր: Ուստի ան բարձրացաւ Գողգոթա լեռը, որ այն ժամանակ կը գործածուէր իբրեւ աղբատեղի:

Հեղինէ թագուհին պեղել տուաւ այն տեղը, ուր կ'ենթադրէին գտնել Յիսուսի խաչափայտը: Անոր ենթադրութիւնը ճիշդ դուրս եկաւ եւ փորուած տեղէն ի յայտ եկան երեք խաչափայտեր: Գիտնալու համար, թէ ո՞րն է Յիսուսի խաչափայտը, իւրաքանչիւրը առանձնաբար դրին մեռած մանուկի մը դիակին վրայ: Երբ Յիսուսի խաչափայտը մօտեցուցին մանուկին, ան յարութիւն առաւ: Այսպիսով գիտցան Յիսուսի խաչափայտը, որ հետագային փոքր մասերու վերածելով բաժնեցին եկեղեցիներուն:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԾԻՆ

ԻՆՉ ԿՐ ՆՇԱՆԱԿԷ ՆՆՁԵՅԵԱԼԻ ԵՕԹՆՕՐԷՔ ԵՒ ԻՆՉ ՁԵՒՈՎ ԿՐ ԿԱՏԱՐՈՒԻ

Յրեաները սովորութիւն ունէին եօթը օր սուգ պահել մեռելիս վրայ, ինչպէս կ'երեւի Յակոբ Լահապետի մահէն. «Եկան Ատաղի կալը, որ Յորդանանի անդի կողմն է: Յոն մեծ ու խիստ սաստիկ լացով մը ողբացին եւ իր հօրը եօթը օր սուգ ըրաւ» (Ծն. 50.10). Եւ ինչպէս Ղազարոսի յարութեան պատումին մէջ կը տեսնենք, թէ երբ Սարիամս ու Սարթան Քրիստոսի դիմաւորութեան ելան, ներկաները կարծեցին, թէ գերեզման կ'երթան: Առաջին դարուն տնօրինուեցաւ եօթներորդ օրը կատարել Պատարագով եւ Ամբիծքով, եւ այդ եօթներորդ օրուան ընթացքին միայն սգաւորները գերեզման կ'երթան քահանային հետ, ուր Մաշտոցին համաձայն հանգըստեան կարգ կը կատարուի:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Քու խաչդ թող մեզի ապաւեն ըլլայ. Տէ՛ր Յիսուս, երբ Հօրը փառքով երելիս՝ լուսաւոր ամպերու վրայ: Այն ատեն թող ամօթով չմնանք մենք՝ քեզի յուսացողներս, այլ՝ քու մեծ զօրութեամբդ ուրախանանք՝ քու աջ կողմդ բազմած, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԱՍՏՈՒԾՈՅ ՄՕՏԻԿ ԵՂՈՂ ՄԱՐԳԸ՝ ՄԱՐԴՈՅ ԱԼ ՄՕՏԻԿ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ

Ղեւտացի մըն ալ նոյն տեղէն անցնելու ատեն տեսաւ վիրաւորը եւ ինքն ալ շրջանցեց գնաց (Ղկ. 10.32): Ո՞վ էր Ղեւտացին եւ ի՞նչ էր իր պաշտօնը: Ղեւտացին տաճարին մօտիկ անձն էր: Վկայութեան Խորանին, Ուխտի Տապանակին եւ հետագային, տաճարին պահպանութիւնը կատարելու կոչուած անձն էր: Ան նոյնիսկ ժողովուրդին պահպանութիւնը կատարելու կոչուած մէկն էր (Թւ. 3.5-8): Ահաւասիկ այսպիսի մէկն էր, որ տեսաւ վիրաւոր մարդը գետին ինկած եւ շրջանցեց գնաց: Ան կոչուած էր պահպանելու իր եղբայրը բայց տէր չկեցաւ իր կոչումին: Ան մօտիկ էր տաճարին, բայց հեռու էր տաճար ըլլալու կոչուած մարդոցմէն: Ան մօտիկ էր տաճարին, բայց հեռու էր Աստուծմէ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Անկասկած, որ մենք եւս մօտիկ ենք Աստուծոյ, բայց հարց կու տամ, մօտի՞կ ենք նաեւ մարդոց: Մօտիկ ենք եկեղեցւոյ, բայց մօտի՞կ ենք նաեւ աղքատին ու որբին: Կը յաճախենք եկեղեցի, բայց կը յաճախենք նաեւ անտեսուած եւ մոռցուած մարդոց տուները:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵԹԷ ՍԻՐՏԿ ԿԱՏՈՒԾՈՅ ՀԱՆՆԵՎՊ ԵՐԱՍՏԱԿԻՏՈՒԹԵԱՄՍԲ ԼԵՅՈՒՆ Է ԵՒ Կ՛ՈՒՉԵՍ ՁԻՆՔ ԳՈՂԱՔԱՆԵԼ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 40

Համբերութեամբ սպասեցի Տիրոջ, եւ ան եկաւ օգնութեան, լսեց իմ աղաչանքս: Զիս դուրս հանեց տառապանքի գուրէն ու նահիճէն, ժայռի վրայ կանգնեցուց, ամրապնդեց քայլերս եւ շրթներուս վրայ դրաւ նոր երգ մը, օրհնութեան երգ՝ մեր Աստուծոյն: Շատեր պիտի տեսնեն եւ ահով լեցուին, եւ Տիրոջ պիտի վստահին: Երանի՛ այն մարդուն, որ Տիրոջ կը վստահի, եւ չի կոթնիր սուտ աստուածներուն, ո՛չ ալ անոնց՝ որոնք ստութեան կը հետեւին: Ի՛նչ հրաշալի են գործերը, որ ըրիր մեզի համար, Ո՞վ Տէր, Աստուածս, եւ քու ծրագիրներդ, որ մեզի համար պատրաստեցիր: Զկայ մէկը քեզի նման: Պիտի ուզէի հոչակել ու պատմել գանձի, բայց ա՛յնքան շատ են ու անթիւ: Զոհ եւ ընծայ չկամեցար, ողջակէզ կամ մեղքի համար գոհ չպահանջեցիր, այլ՝ ականջներս բացիր, որ քեզ լսեմ: Եւ ես ըսի.՝ «Ահա կու գամ, ինչպէս գիրքի գալարին մէջ գրուած է ինձի համար: Ի՛նչքան կ'ուզեմ եւ քու կամքը կատարել, ո՞վ Աստուած, օրէնքդ իմ սրտիս մէջ է: Քու ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ փրկութիւնդ աւետեցի, եւ դուն գիտես, Տէ՛ր, թէ ես բնաւ պիտի չդադրիմ գայն պատմելէ: Արդարութիւնդ սրտիս մէջ ծածկած չպահեցի, հաւատարմութեանդ եւ փրկութեանդ մասին խօսեցայ միշտ, եւ ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ վկայեցի քու սիրոյդ եւ հաւատարմութեանդ մասին: Ուստի դուն, Տէ՛ր, գթութիւնդ մի զլանար ինձի. քու սէրդ եւ ողորմութիւնդ թող տեսարար պահպանեն զիս: ԱՄԷՆ